Հավատո Հանգանակը ուսումնասիրելու վարժություն

Քայլ 1. Ընտրեք մեկ Հավատո Հանգանակ, որը կցանկանայիք ուսումնասիրել այսօր, և պատասխանեք հետևյալ հարցերին.

- Ի՞նչ հավերժական ճշմարտություն կամ ճշմարտություններ եք սովորում այս հավատո հանգանակից:

- Այս հավատո հանգանակի ուսմունքներն ինչպե՞ս կարող են ազդել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ ձեր հարաբերությունների վրա:

Քայլ 2. Ընտրեք հետևյալ տարբերակներից առնվազն երկուսը՝ ընտրած հավատո հանգանակի մասին ավելին իմանալու համար .

a. *Մտապահեք* Մտածեք մի գաղափար, որը կօգնի ձեզ մտապահել ձեր ընտրած հավատո հանգանակը և ժամանակ հատկացրեք՝ այն մտապահելու համար:

b. *Գտեք առնչվող նյութեր* Գտեք համապատասխան սուրբ գրություններ կամ հայտարարություններ Եկեղեցու ղեկավարներից, որոնք վերաբերում են ձեր ընտրած հավատո հանգանակին: Որպես օգնություն կարող եք օգտագործել այնպիսի գործիքներ, ինչպիսիք են սուրբ գրությունների ծանոթագրությունները, Թեմաների ուղեցույցը, Սուրբ գրքերի ուղեցույցը կամ որոնման գործառույթը Gospel Library հավելվածում:

c. *Ստեղծեք տեսողական պատկեր* Ստեղծեք պատկեր, որպեսզի ավելի լավ հաղորդակցվեք կամ ներկայացնեք ձեր ընտրած հավատո հանգանակի ուսմունքները: Դա կարող է լինել գծանկար, կոլաժ, բառերի ամպ կամ մեմ: (Աստվածության սրբազան բնույթի պատճառով խուսափեք Աստվածագլխի անդամներին նկարելուց:)

d. *Ստեղծեք սցենար* Մտածեք այն իրավիճակների մասին, որոնց բախվել եք դուք կամ այլ դեռահասներ, կամ ավետարանի հարցերի մասին, որոնց համար ձեր ընտրած հավատո հանգանակը կարող է օգտակար լինել: Գրեք սցենար կամ հարցեր և բացատրեք, թե ինչպես կամ ինչու դրանց համար օգտակար կարող են լինել հավատո հանգանակում ուսուցանող ճշմարտությունները:

e. *Վկայեք* Գրեք ձեր վկայությունը հավատո հանգանակում ուսուցանվող ճշմարտությունների մասին: Նկարագրեք, թե ինչպես են այդ ուսմունքները օրհնել ձեր կյանքը և ավելի մոտեցրել ձեզ Աստծուն:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_491-1